ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«25» փետրվարի 2026 թվական N 417-Ա

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ «1043 ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ «11007 ՇՈՒԿԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշման 14-րդ կետի «բ» ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի 2026 թվականի հունվարի 20-ի N 111-Ա հրամանի 3-րդ կետի 2-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2026 թվականի «1043 բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման» ծրագրի «11007 շուկաների զարգացում և միջազգային համագործակցություն» միջոցառման ծրագիրը՝ համաձայն հավելված N1-ի և Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության 2026 թվականի «1043 բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման» ծրագրի «11007 շուկաների զարգացում և միջազգային համագործակցություն» միջոցառման ծրագրի գնահատման ոչ ֆինանսական ցուցանիշները՝ համաձայն հավելված N2-ի:

2. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի առաջին տեղակալ Գևորգ Մանթաշյանին:

2/25/2026

X

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Signed by: HAYRAPETYAN MKHITAR 2505901047

ՄԽԻԹԱՐ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի
«25» փետրվարի 2026 թվականի թիվ 417-Ա հրամանի

ԾՐԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ «1043 ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ «11007 ՇՈՒԿԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ

Ի.ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ՝ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՏԱՂԱՎԱՐՈՎ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

1. Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) 2026 թվականի «1043 բարձր տեխնոլոգիական արդյունաբերության էկոհամակարգի և շուկայի զարգացման» ծրագրի «11007 շուկաների զարգացում և միջազգային համագործակցություն» միջոցառման ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակներում Նախարարության կողմից ընտրվում են ոլորտային միջազգային հեղինակավոր ցուցահանդեսներ և աջակցություն է ցուցաբերվում հայկական ոլորտային կազմակերպություններին ու միություններին՝ դրանցում ներկայանալու համար:

2. Միջազգային ցուցահանդեսներին հայկական կազմակերպությունների՝ միասնական տաղավարով մասնակցության աջակցությունը պայմանավորված է նախ և առաջ հայկական ապրանքանիշերի, կազմակերպությունների ճանաչվածության և ներկայացվածության խնդրով:

3. Ցուցահանդեսներին մասնակցությունն առավելապես նպաստում է կազմակերպությունների՝ միջազգային շուկաները հետազոտելուն և առաջարկվող ապրանքներն ու ծառայություններն ավելի մրցունակ դարձնելուն, նոր միջազգային գործընկերների (ներառյալ՝ մատակարարներ և ներդրողներ) հետ համագործակցություն հաստատելուն, նոր շուկաներ մուտք գործելուն, վաճառքների ավելացմանը և կազմակերպությունների զարգացմանը:

4. Նախարարությունն ապահովում է ցուցահանդեսի կազմակերպչից միասնական տաղավարի տարածքի վարձակալության, տաղավարի դիզայնի նախագծման, կառուցապատման և ցուցահանդեսային տարածք մուտքի ապահովման աշխատանքների իրականացումը, եթե այլ

բան նախատեսված չէ, սույն հավելվածի 11-րդ և 12-րդ կետերի համաձայն, կողմերի միջև կնքվող պայմանագրով:

5. Ցուցահանդեսներին մասնակցության արդյունքները մշտադիտարկվում են Նախարարության Շուկայի հետազոտության և զարգացման վարչության կողմից ցուցահանդեսին հաջորդող 2 (երկու) տարվա ընթացքում: Ցուցահանդեսի ավարտից հետո՝ 2 տարվա ընթացքում, Նախարարությունը ցուցադրող և այցելուի կարգավիճակով կազմակերպություններից հավաքագրում և ամփոփում է հաշվետվություններ՝ Ցուցահանդեսին մասնակցության արդյունքում կնքված պայմանագրերի (ներառյալ՝ արժեքը) և ձեռք բերված պայմանավորվածությունների, դրանց ընթացքի ու իրագործման արդյունքների վերաբերյալ:

6. Մասնակից կազմակերպությունների ընտրությունն իրականացվում է ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի (այսուհետ՝ Նախարար) 2025 թվականի հուլիսի 31-ի թիվ 1642-Ա հրամանով՝ գնահատող հանձնաժողովի գնահատման արդյունքներով:

7. Յուրաքանչյուր միջոցառման շրջանակում Նախարարի հրամանով ստեղծվում է գնահատող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ կազմված Նախարարության ներկայացուցիչներից (կարող են ընդգրկվել նաև համապատասխան ոլորտային միությունների, մասնագիտացված կազմակերպությունների կողմից ներկայացված թեկնածուներ՝ համաձայնությամբ): Հանձնաժողովը գնահատում է մասնակցության հայտ ներկայացրած կազմակերպություններին և իրականացնում ընտրություն հայտատուների միջև:

8. Յուրաքանչյուր ցուցահանդեսի համար, ըստ անհրաժեշտության, կարող են մշակվել ընտրության առանձին չափանիշներ: Ցուցահանդեսին մասնակցելու համար նախատեսված սահմանված թվին (թիվը սահմանվում է համաձայն տաղավարի նախագծի, որը հաստատվում է Նախարարի կողմից) համապատասխան առավել բարձր միավորներ ստացած կազմակերպությունները համարվում են հաղթող կազմակերպություններ և ստանում են հնարավորություն իրենց հայտադիմումին համապատասխան ցուցահանդեսին մասնակցել որպես ցուցադրող կամ որպես այցելու:

9. Ցուցահանդեսին մասնակցելու համար հաղթող կազմակերպությունների վերաբերյալ եզրակացությունը հաստատվում է Հանձնաժողովի նիստին ներկա անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ և կցվում արձանագրությանը:

10. Մրցութային գործընթացի ավարտից հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում Հանձնաժողովի նախագահը արձանագրությունը և դրա հիման վրա կազմված եզրակացությունը ներկայացնում է Նախարարին:

11. Որպես ցուցադրող ընտրված կազմակերպությունների հետ Նախարարությունը կնքում է «Միջազգային ցուցահանդեսի հայկական միասնական տաղավարում ներկայացվող կազմակերպությունների մասնակցության մասին» պայմանագիր:

12. Որպես այցելու ընտրված կազմակերպությունների հետ կնքվում է «Միջազգային ցուցահանդեսին այցելուի կարգավիճակ ունեցող կազմակերպությունների մասնակցության մասին» պայմանագիր:

13. Ընտրված կազմակերպությունների՝ նախապես սահմանված թվով ներկայացուցիչներին կազմակերպության արտադրանքն ու ծառայությունները ներկայացնելու համար տրամադրվում են միջոցառման մուտքի տոմսեր (բեյջեր) և առանձնացված տարածք միասնական տաղավարում, եթե այլ բան նախատեսված չէ սույն հավելվածի 11-րդ և 12-րդ կետերի համաձայն՝ կողմերի միջև կնքվող պայմանագրով:

II.ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ԵՐԿԿՈՂՄ ԲԻԶՆԵՍ ՖՈՐՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

14. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների զարգացման խթանման մեկ այլ միջոցառում է գործարար ֆորումների կազմակերպումը: Միջոցառման շրջանակում նպատակադրվում է հանդիպում-քննարկումներ կազմակերպել հայկական և օտարերկրյա կազմակերպությունների միջև՝ նպատակ ունենալով հայկական կազմակերպություններին ծանոթացնել ոլորտի միջազգային զարգացման միտումներին, վերհանել համագործակցության հնարավորությունները և նպաստել դրանց ձևավորմանն ու զարգացմանը:

15. 2026 թվականի ընթացքում ծրագրվում է կազմակերպել 3 գործարար ֆորում:

III.ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

16. Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության ոլորտի կազմակերպությունների զարգացման խթանման մեկ այլ միջոցառում է Հայաստանում տեխնոլոգիական միջոցառումների և ցուցահանդեսների կազմակերպման աջակցումը: Ծրագրի շրջանակում նպատակադրվում է աջակցել տեղական և միջազգային միջոցառումների անցկացմանը՝ նպատակ ունենալով հայկական կազմակերպություններին ծանոթացնել ոլորտի նորագույն տեխնոլոգիաներին և միջազգային լավագույն փորձին, ստեղծել հարթակ իրենց նորարարական լուծումների ցուցադրման համար, վերհանել համագործակցության հնարավորությունները և նպաստել

տեխնոլոգիական էկոհամակարգի ամրապնդմանն ու Հայաստանի դիրքավորմանը որպես տեխնոլոգիական կենտրոն:

17. 2026 թվականի ընթացքում ծրագրվում է աջակցել Հայաստանում անցկացվող առնվազն 3 տեխնոլոգիական միջոցառումների և ցուցահանդեսների կազմակերպմանը:

IV.ՄԻՋՈՑԱՌՄԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՊԼԱՆԱՅԻՆ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆ

18. Ծրագրի իրականացման համար ՀՀ պետական բյուջեով նախատեսված է 344,956,000 ՀՀ դրամ:

19. Միջոցառման 2026 թվականի ֆինանսական միջոցների պլանային բաշխվածությունը ներկայացված է ստորև.

Հ/Հ	Միջոցառման անվանում	Նախատեսվող բյուջե ՀՀ դրամ
1	Միջազգային տեխնոլոգիական ցուցահանդեսներին միասնական տաղավարով մասնակցության ապահովում, այդ թվում՝ 1. «Համաշխարհային բջջային կոնգրես 2026» (MWC Barcelona 2026), 02-05 մարտ 2026թ., Բարսելոնա, Իսպանիայի Թագավորություն, 2. «Ճապոնիայի SS Շաբաթ 2026» (Japan IT Week 2026), 08-10 ապրիլ 2026թ., Տոկիո, Ճապոնիա, 3. «Ջայտեքս Եվրոպա 2026» (GITEX Europe 2026), 30 հունիս - 01 հուլիս 2026թ., Բեռլին, Գերմանիայի Դաշնային Հանրապետություն, 4. «ԴիջիԹեք 2026» (Digitec 2026), հոկտեմբեր, Երևան, Հայաստանի Հանրապետություն, 5. 2027 թվականին կայանալիք թվով 3 ցուցահանդեսների տաղավարների վարձակալության կանխավճարների հատկացման ապահովում	204,456,000
2	Դրամաշնորհի ձևով ՏՀՏԳՄ-ին՝ Silicon Mountains RISE միջոցառման կազմակերպման աջակցություն	60,000,000
3	Դրամաշնորհի ձևով՝ Հայաստանում անցկացվող տեխնոլոգիական միջոցառումների և ցուցահանդեսների կազմակերպման աջակցություն, այդ թվում՝ 1. ԴիջիԹեք 2026 2. Silicon Mountains 2026 3. Ինժեներական շաբաթ 2026	50,000,000
4	Գործարար ֆորումների կազմակերպում	4,000,000
5	Հետազոտական աշխատանքների իրականացում	15,000,000
6	Այլ ծախսեր	11,500,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	***344,956,000***

Հավելված N2
Հայաստանի Հանրապետության
բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի
«25» փետրվարի 2026 թվականի թիվ 417-Ա հրամանի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2026 ԹՎԱԿԱՆԻ «1043 ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՇՈՒԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ» ԾՐԱԳՐԻ «11007 ՇՈՒԿԱՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի գնահատման ոչ ֆինանսական ցուցանիշները թվարկված են ստորև.

ՑՈՒՑԱՆԻՇ	ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔ
Միջազգային ցուցահանդեսներին մասնակցություն «Հայաստան» տաղավարով, հատ	4
Կազմակերպվող ֆորումների քանակը, հատ	3
Միջազգային ցուցահանդեսներին, ֆորումներին մասնակցության արդյունքում կնքվող պայմանագրերի քանակը, հատ	>=7
Հայաստանում անցկացվող տեխնոլոգիական միջոցառումների և ցուցահանդեսների կազմակերպման աջակցություն	>=3
Հաջորդ տարիներին անցկացվելիք միջազգային ցուցահանդեսների քանակը, որոնց համար հատկացվելու է մասնակցության կանխավճար, հատ	3